www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro

Միջերկրածովյան ընտանեկան տենդ

Տարբերակ 2016

3.ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների առօրյա կյանքի վրա:

Երեխան և նրա ընտանիքը արդեն առնչվում են գլխավոր խնդիրների հետ մինչև ախտորոշման հաստատումը: Երեխան ծանր որովայնացավի, կրծքավանդակի ցավի և հոդացավերի պատճառով հաճախակի խորհրդատվությունների կարիք է ունենում: Որոշ երեխաներ սխալ ախտորոշման պատճառով ենթարկվում են սխալ վիրաբուժական միջամտությունների: Ախտորոշումը հաստատելուց հետո, դեղորայքային բուժման նպատակը կայանում է նրանում, որ երեխան և նրա ընտանիքը ունենան նորմալ կյանք: ՄԸՏ –ով երեխաները երկարատև, կանոնավոր դեղորայքային բուժման կարիք ունեն: Կոլխիցինի ընդունումը ոչ միշտ է համապատասխան ձևով կատարվում, ինչն էլ կարող է հիվանդի մոտ բարձրացնել ամիլոիդոզի զարգացման ռիսկը: Գլխավոր խնդիրը ամբողջ կյանք տևող բուժման հանդեպ հոգեբանական դժվարությունն է: Հոգեբանասոցիալական աջակցությունը և կրթական ծրագրերը հիվանդի համար մեծ օգնություն են:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Հաճախակի նոպաները առաջացնում են լուրջ խնդիրներ դպրոց հաճախելու համար և Կոլխիցինով բուժումը կբարելավի այս խնդիրը: Դպրոցում հիվանդության մասին ինֆորմացիան կարող է օգտակար լինել, մասնավորապես որպեսզի ուսուցիչները իմանան, թե ինչ անեն նոպայի ժամանակ:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

ՄԸՏ-ով հիվանդները, ովքեր կանոնավոր ստանում են Կոլխիցին, կարող են զբաղվել իրենց ցանկացած սպորտաձևով: Միակ խնդիրը

կարող է լինել հոդերի երկարաձգվող բորբոքումները, որոնք կարող են ախտահարված հոդերում շարժումների սահմանափակման պատճառ լինել։

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:

Չկա յուրահատուկ սննդակարգ։

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ոչ, չի կարող։

3.6 Երեխաները կարո՞ղ են պատվաստվել:

Այո, կարող են պատվաստվել։

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:

ՄԸՏ-ով հիվանդները մինչև Կոլխիցին ստանալը կարող են խնդիր ունենալ հղիանալու հետ, բայց հենց Կոլխիցինը նշանակվի, այս խնդիրը կանհետանա։ Բուժիչ դեղաչափերի դեպքում սպերմայի քանակի նվազում շատ հազվադեպ է հանդիպում։ Կանայք չպետք է դադարեցնեն Կոլխիցինի ընդունումը հղիության կամ կրծքով կերակրման ընթացքում։